

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ք.Գյումրի, [redacted]

«ԱՄԱՍՏԵՔՍ» ՍՊ ընկերությունը /ԶՎՀՀ՝ 00467596, հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գաջեզործների 1, բիլդ 1/, ի դեմս  
անօրենն Շաղիկ Պելիջիի, որը գործում է Կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գործատու» մի կողմից և  
[redacted] (Անձնագիր՝ AI [redacted] տրված [redacted]-ին [redacted] կողմից, առց.  
քարտ [redacted] հասցե՝ (ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, [redacted] այսուհետ՝ «Աշխատող», մյուս կողմից,  
այսուհետ միասին՝ «Վոլմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. ՊՅՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 1.1 Գործատուն Աշխատողին տրամադրում է աշխատանք, և պարտավորվում է վճարել նրա կատարած աշխատանքի համար, իսկ Աշխատողը պարտավորվում է կատարել Գործատուի հանձնարարած աշխատանքը սույն պայմանագրով սահմանված պայմաններով՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահական կանոնները:
- 1.2 Աշխատողը աշխատելու է որպես կառոդ քանվորուհի և անմիջականորեն ենթարկվելու է տնօրենին: Աշխատանքների կատարման վայրն է՝ ՀՀ Շիրակի մարզ, Ք.Գյումրի, Դանդիլյան 51:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2.1.1 Աշխատանքը սկսել [redacted] 08.2018թ.-ից:
- 2.1.2 Բարեխղճորեն կատարել սույն պայմանագրով ստանձնած իր աշխատանքային պարտականությունները:
- 2.1.3 Պահպանել Գործատուի ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը:
- 2.1.4 Կատարել աշխատանքի սահմանված նորմերը:
- 2.1.5 Պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության անպահովման միջոցները:
- 2.1.6 Բարեխղճորեն վերաբերվել Գործատուի զույքի պաշտպանությանը, սպառնացող վտանգի ծագման մասին անմիջապես տեղեկացնել Գործատուին:
- 2.1.7 Կատարել պաշտոնական հրահանգներով կամ տնօրենի հրամաններով և կարգադրություններով իր վրա դրված պարտականությունները, ենթարկվել իր անմիջական ղեկավարի օրինաչափ պահանջներին:
- 2.1.8 Աշխատանքային օրվա ընթացքում աշխատաժամանակն օգտագործել իր աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարման նպատակով և չկատարել իր աշխատանքային պարտականություններից շեղվող Գործատուի, ղեկավար անձանց կողմից իրեն չհանձնարարված այլ աշխատանք:
- 2.1.9 Իր պարտականությունների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, կատարել աշխատանք՝ ոչ աշխատանքային և տոնակալ օրերին:
- 2.1.10 Իր պարտականությունները կատարել անձամբ:
- 2.1.11 Անցնել պարբերական բժշկական զննում օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:
- 2.1.12 Իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:
- 2.2 Աշխատողն իրավունք ունի՝
  - 2.2.1 Սույն պայմանագրի 4-րդ կետի համաձայն ստանալ վարձատրություն:
  - 2.2.2 Պահանջել գործատուից անպահովել օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքը:
  - 2.2.3 Իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:
- 2.3 Գործատուն պարտավորվում է՝
  - 2.3.1 Աշխատողին անպահովել սույն պայմանագրով պայմանավորված աշխատանքով և կազմակերպել նրա աշխատանքը:

[redacted]  
(ստորագրություն)



- 2.3.2 Սույն պայմանագրի 4-րդ կետի համաձայն վճարել Աշխատողի աշխատավարձը:
- 2.3.3 Ամենամսյա կարգով Աշխատողին տրամադրել պայմանագրով:
- 2.3.4 Ապահովել անվտանգ և երդմալ աշխատանքային պայմաններ:
- 2.3.5 Աշխատանքի ընդունվելու ժամանակ, ինչպես նաև աշխատելու ընթացքում, Աշխատողին ծանուցանել Գործատուի ներքին կարգապահական կանոններին, աշխատանքի տեխնիկայի, պաշտպանության և հաճախորդների անվտանգության պահանջներին:
- 2.3.6 Ժամանակին ապահովել Աշխատողին անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, որպեսզի Աշխատողը կարողանա կատարել աշխատանքի երդմաները:
- 2.3.7 Աշխատողի ամենամսյա տվյալները մշակելու պահպանել ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված պահանջները:
- 2.3.8 Իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ և սույն պայմանագրով հրեն վերապահված այլ պարտականություններ:

**2.4 Գործատուն իրավունք ունի՝**

- 2.4.1 Ցանկացած պահին ստուգել աշխատողին հանձնարարված աշխատանքների կատարման ընթացքը և աշխատողի կողմից իր պարտականությունները ոչ պատշաճ որակով կատարելու դեպքում վերջինիս ենթարկել կարգապահական պատասխանատվության: Մեկ տարվա ընթացքում երկու անգամ միևնույն աշխատանքին կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքում աշխատանքին ազատել աշխատանքից:
- 2.4.2 Աշխատանքին ներգրավել արտաժամյա աշխատանքների, որի տևողությունը իրար հաջորդող երկու օրերի ընթացքում չի կարող անցնել 12 ժամից՝ ներառյալ հիմնական աշխատաժամանակը:
- 2.4.3 Արտադրական ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման դեպքում, ինչպես նաև արտադրական սնկրաժեշտությամբ պայմանավորված այլ դեպքերում, Գործատուն իրավունք ունի առաջարկել կնքելու փոխված պայմանագրով աշխատանքային պայմանագիր: Փոխված պայմաններում աշխատանքը կատարելու Աշխատողի անհամաձայնության դեպքում Գործատուն իրավունք ունի Աշխատողին ազատել աշխատանքից ՀՀ աշխատանքային օրենսդրության 113-րդ հոդվածի համապատասխան՝ պահպանելով աշխատանքային պայմանագրի լուծման սահմանված կարգը:
- 2.4.4 Աշխատողից պահանջելու կատարել աշխատանքային պայմանագրով չնախատեսված աշխատանքներ միայն ՀՀ աշխատանքային օրենսգրքով և օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:
- 2.4.5 Որոշել աշխատողին հանձնարարված աշխատանքների կատարման հաջորդականությունը և ըստ ժամկետների տալ հանձնարարականներ:
- 2.4.6 Իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ և սույն պայմանագրով հրեն վերապահված այլ իրավունքներ:

**3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵԿՆՈԴՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՆԳԻՍՏԸ, ԱՐՉԱԿՈՒՐՂԸ**

- 3.1 Սույն պայմանագրով աշխատանքային օրվա սկիզբը սահմանվում է ժամը 08:30-ին, իսկ ավարտը՝ ժամը 17:30-ին: Աշխատաժամանակի տևողությունը չի կարող անցնել շաբաթական 40 ժամից, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
- 3.2 Աշխատողի հանգստի և սնվելու ընդմիջման սկիզբը սահմանվում է ժամը 13:00, իսկ ավարտը՝ ժամը 14:00:
- 3.3 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքային շաբաթվա ընդհանուր աշխատաժամանակի տևողությունը չի կարող գերազանցել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված աշխատաժամանակը:
- 3.4 Աշխատողին տրամադրվում է ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 20 օր տևողությամբ, աշխատավարձի պահպանմամբ և օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 3.5 Սույնով կողմերը համաձայնվում են, որ աշխատողին ամենամյա արձակուրդը տրամադրվում է Գործատուի կողմից հաստատված ամենամյա արձակուրդների տրամադրման հերթականությամբ:
- 3.6 Ստորագրելով սույն պայմանագիրը Աշխատողը տալիս է իր համաձայնությունը արտադրական ծայրահեղ անհրաժեշտության դեպքում արձակուրդից հետ կանչվելու վերաբերյալ:
- 3.7 Աշխատողի ցանկությամբ ամենամյա արձակուրդը կարող է տրամադրվել մասերով, որոնցից մեկը պետք է կազմի առնվազն 12 աշխատանքային օր: Անխափան արտադրությունն ապահովելու նպատակով

\_\_\_\_\_

(ստորագրություն)



գործատուն Աշխատողի ամենամյա արձակուրդից չօգտագործված մասը տրամադրում է այն ժամանակ, երբ դա չի խոչընդոտում արտադրության բնականոն գործընթացի:

3.8 Աշխատողի պահանջով նրան տրամադրվում է չվճարվող արձակուրդ միայն «Աշխատանքային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և ժամկետներով»:

#### 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ, ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ

- 4.1 Աշխատանքի վարձատրության ամսական չափը սահմանվում է՝ առաջին 3 ամիսը 55000ՀՀ դրամ (ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերը, վճարները պահելուց հետո) այնուհետև վարձատրությունը կլինի գործարքային ըստ հավելված 1-ի, որը յուրաքանչյուր ամիս հաշվարկվում և վճարվում է աշխատողին ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը:
- 4.2 Գործատուի կողմից աշխատավարձը վճարվում է Աշխատողին «Արժույթով, կանխիկ, կամ անկանխիկ» փոխանցելով Աշխատողի բանկային հաշվի համարին:
- 4.3 Հավելումների, պարգևավճարների ու փոխանցումների չափերը և վճարման կարգը սահմանվում է Գործատուի կողմից, եթե «Օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ»:
- 4.5 Ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդը սկսվելուց երեք օր առաջ:
- 4.6 Աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում Գործատուն Աշխատողի հետ վերջնահաշվարկը կատարում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:
- 4.7 «Օրենսդրությամբ սահմանված կարգով անհաղթահարելի ուժ համարվող պատճառներով առաջացած պարտավորող և Աշխատողի կողմից հայտարարված գործադուլի ժամանակահատվածը վճարման ենթակա չէ»:

#### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 5.1 Կողմերը իրենց պարտավորությունները չկատաչելու կամ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 5.2 Աշխատողի կողմից իր աշխատանքային պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով Ընկերությանը նյութական վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունները կարգավորվում են «Աշխատանքային օրենսգրքով, եթե «Աշխատանքային օրենսգրքով այլ բան նախատեսված չէ»:
- 5.3 Գործատուի նյութական պատասխանատվությունն առաջանում է «Աշխատանքային օրենսգրքով նախատեսված դեպքերում»: Գործատուն հատուցում է իր պատճառած վնասը «Աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով»:
- 5.4 Սույն պայմանագիրը աշխատողի նախաձեռնությամբ մեկ տարի ժամկետից շուտ լուծելու կամ վերջինիս կողմից սույն ժամանակահատվածում միակողմանի դադարեցվելու դեպքում աշխատողը պարտավոր է Գործատուին վճարել հարյուր հազար ՀՀ դրամ գումար՝ որպես կարի, աշխատանքի հնարությունների և փորձի ձեռք բերման ու կատարելիության բարձրացման համար Գործատուի կողմից աշխատողի վրա կատարված բոլոր տեսակի ծախսերի փոխատուցում:

#### 6. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 6.1 Կողմերի միջև վեճերի առաջացման դեպքում այն ենթակա է կարգավորման Գործատուի և Աշխատողի միջև անմիջական բանակցությունների միջոցով՝ տաս օրվա ժամկետում:
- 6.2 Կողմերի միջև վեճը սույն պայմանագրի 6.1 կետում նշված ժամկետում չկարգավորելու դեպքում այն ենթակա է լուծման դատական կարգով՝ «Օրենսդրությամբ սահմանված կարգով»:

#### 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈՒՍՈՒՄԸ, ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ

- 7.1 Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ «Աշխատանքային օրենսգրքով նախատեսված դեպքերի»: Սույն պայմանագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են լրացուցիչ համաձայնագրերով՝ որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժան մասը:

\_\_\_\_\_

(ստորագրություն)



7.2 Սույն պայմանագիրը կարող է լուծվել կողմերի համաձայնությամբ և ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված կարգով և դեպքերում:

**8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

8.2 Սույն պայմանագիրը կնքվում է մինչև 22.03.2019թ.-ը:

**9. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

9.1 Սույն պայմանագիրը ստորագրելիս Աշխատողը ծանոթացել է աշխատանքային պայմաններին, Գործատուի ներքին կարգապահական կանոններին:

9.2 Սույն պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը ենթակա են կարգավորման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կողմերի միջև կնքվող հավելվածները հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.4 Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ԳՈՐԾՍՏՈՒՄ

ԱՇԽԱՏՈՂ՝

«ՄԱՍՍՏԵՔՍ» ՍՊԸ  
ՀՎՀՀ 00467596

[Redacted Signature]

Անձնագիր AF [Redacted]


Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գաջեգործների 1.թիվ 1

Բանկ «Արմսվիսթանկ»ՓԲԸ

[Redacted Bank Information]

Հ/Հ 25000103465201000

(ստորագրություն)



Տնօրեն

Ջ. Գեղիջի



«ԱՍՏՄՍՏԵՔՍ» ՍՊԸ-ի և  
պայմանագիր

մինչև [redacted] կերպով N [redacted] աշխատանքային

Արտադրողի քանակային աշխատողների աշխատավարձի հաշվարկ

Մտորն ներկայացված եղանակով հաշվարկվում է աշխատավարձը հետևյալ սրտատների համար

1. Կարող բանվոր(ուհի)
2. Որակի հսկիչ
3. Տեխնոլոգ
4. Կարպետ
5. Փաթեթավորող
6. Թել մաքրող
7. Շրջիկ որակի հսկիչ
8. ԱԶԼ (Վերջնական որակի ստուգող)
9. Գլխավոր տեխնոլոգ

Արտադրանքը բաղկացած է տարբեր մոդելներից, յուրաքանչյուր մոդել բաղկացած է տարբեր սերիաներից, որոնք եզակի են. յուրաքանչյուր մոդել ունի իր պատրաստման ժամանակահատվածը, մինչև մոդելի տարբեր սերիաների պատրաստման ժամանակահատվածները նույն են: Յուրաքանչյուր մոդելի պատրաստման նորմատիվային աշխատաժամանակը որոշելու համար իրականացվում է քրոնոմետրաժ:

Աշխատավարձի հաշվարկը կատարվում է հետևյալ հերթականությամբ

- Տարեկի հիման վրա որոշվում է յուրաքանչյուր ագրեգատի կարող բանվոր(ուհի)ների ամսվա ընթացքում փաստացի աշխատած ընդհանուր րոպեն՝

$$G_j = \sum_{i=1}^{n_j} \delta \theta_{i,j} * X_{ij}, i = 1 \dots n_j, j = 1 \dots m.$$

- որտեղ  $i$ -ն կարող բանվոր(ուհի)ների ինդեքսն է, իսկ  $j$ -ն՝ ագրեգատի,  $n_j$ -ն ամսվա ընթացքում ներկա կարող բանվոր(ուհու)ի քանակն է  $j$ -րդ ագրեգատում, իսկ  $m$ -ը՝ ագրեգատների թվաքանակն է,  $X_{ij}$ -ին  $j$ -րդ ագրեգատի  $i$ -րդ կարող բանվոր(ուհու)ի ամսվա ընթացքում փաստացի աշխատած օրերի թիվն է,
- Հաշվարկվում է յուրաքանչյուր ամիս յուրաքանչյուր ագրեգատի կողմից փաստացի տրված արտադրանքների ընդամենը րոպեն: Այսպիսով,  $T_j$ -ն  $j$ -րդ ագրեգատի կողմից ամսվա ընթացքում պատրաստված արտադրանքների ընդամենը րոպեն է՝

$$T_j = \sum_{r \in M} Q_{r,j} * t_{r,j}, i = 1 \dots n_j, j = 1 \dots m.$$

որտեղ  $M$ -ը մոդելների բազմությունն է,  $r$ -ն մոդելների ինդեքսն է,  $Q_{r,j}$   $j$ -րդ ագրեգատի կողմից  $r$ -րդ մոդելից փաստացի պատրաստված ընդհանուր քանակն է ամսվա ընթացքում,  $t_{r,j}$ -ն  $r$ -րդ մոդելի քրոնոմետրաժով որոշված պատրաստման համար անհրաժեշտ (նորմատիվային) րոպեն է, որը համապատասխանեցված է պատվիրատու ընկերության կողմից որոշված մոդելների րոպեի հետ:

- $K = \frac{T_j}{G_j} * 100\%$ , որը ներկայացնում է  $j$ -րդ ագրեգատի փաստացի կատարողականը ամսվա կրտվածքով,
- Յուրաքանչյուր ամսվա աշխատավարձը հաշվարկվում է ըստ կատարողականի՝ փաստացի կատարված աշխատանքի՝  $T_j$ -ի հիման վրա, այսպես.

[redacted]  
-----  
(ստորագրություն)



- եթե  $K_i <= 50\%$  ապա աշխատավարձը հաշվարկվում է յուրաքանչյուր բույքի համար 10 դրամ, այսինքն ագրեգատի աշխատավարձը՝  $A_j = T_j \cdot 10$  դրամ,
  - եթե  $50\% < K_i <= 65\%$ , ապա աշխատավարձը հաշվարկվում է յուրաքանչյուր բույքի համար 11 դրամ, այսինքն ագրեգատի աշխատավարձը՝  $A_j = T_j \cdot 11$  դրամ,
  - եթե  $65\% < K_i <= 75\%$ , ապա աշխատավարձը հաշվարկվում է յուրաքանչյուր բույքի համար 12 դրամ, այսինքն ագրեգատի աշխատավարձը՝  $A_j = T_j \cdot 12$  դրամ,
  - եթե  $75\% < K_i <= 85\%$ , ապա աշխատավարձը հաշվարկվում է յուրաքանչյուր բույքի համար 13 դրամ, այսինքն ագրեգատի աշխատավարձը՝  $A_j = T_j \cdot 13$  դրամ,
  - եթե  $85\% < K_i <= 100\%$ , ապա աշխատավարձը հաշվարկվում է յուրաքանչյուր բույքի համար 14 դրամ, այսինքն ագրեգատի աշխատավարձը՝  $A_j = T_j \cdot 14$  դրամ
- Որոշվում է յուրաքանչյուր արգրեգատի միջին աշխատավարձը՝ հաշվարկելով ագրեգատի աշխատավարձը բաժանելով արգրեգատի կարող բանվոր(ուհի)ների միջին մարդաքանակի վրա, հետևյալ ձևով.

$$M_j = \frac{A_j}{n_j} \text{ որտեղ } \bar{n}_j = \frac{G_j}{8 * 60 * \text{աշխ. օր}^1}$$

$\bar{n}_j$ -ն միջին մարդաքանակն է j-րդ արգրեգատում,  $j = 1 \dots m$ :

1- Աշխատանքային օրը որոշվում է փաստացի ամսվա կտրվածքով 5-օրյա աշխատանքային ռեժիմով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված աշխատանքային օրերի քանակով:

Միջին աշխատավարձը՝  $M_j$ -ն, հանդիսանում է հիմք վերը նշված պաշտոնների աշխատավարձերի հաշվարկման համար:

1. Կարող բանվոր(ուհի)

j-րդ ագրեգատի i-րդ կարող բանվոր(ուհու)ի ամսվա ընթացքում փաստացի աշխատավարձը որոշվում է  $M_j$ -ի հիման վրա կշռված j-րդ ագրեգատի վարպետի կողմից որոշված գործակիցով:

Այսպես, այն կարող բանվոր(ուհի)ները, որոնց  $E_{ij} \leq 1$ , ապա

$$\text{Աշխ. ԿԸ}_{ij} = M_j * E_{ij} * X_{ij}, \text{ որտեղ } \sum_{i=1}^{n_j} E_{ij} = n_j, i = 1 \dots n_j, j = 1 \dots m$$

որտեղ  $E_{ij}$ -ն ցույց է տալիս j-րդ ագրեգատի i-րդ կարող բանվոր(ուհու)ի ներդրումը j-րդ արգրեգատի փաստացի արտադրապրոցեսին:

Այն կարող բանվոր(ուհի)ները, որոնց  $E_{ij} > 1$  ապա


$$\text{Աշխ. ԿԸ}_{ij} = M_j * X_{ij} + e_{ij} * \frac{(E_{ij} - 1)}{\left(\sum_{i=n_1}^{n_k} (E_{ij} - 1)\right)}$$

որտեղ  $e_{ij}$  - ն հաշվարկվում է այն կարող բանվոր(ուհի)ների համար, որոնց  $E_{ij} \leq 1$ , այսպես

$$e_{ij} = \sum_{i=n_1}^{n_k} (M_j * X_{ij} - M_j * E_{ij} * X_{ij}),$$

որտեղ  $n_1 \dots n_k$  այն կարող բանվոր(ուհի)ների ինդեքսն է, որոնց  $E_{ij} \leq 1$

Ծանոթացա աշխատավարձի հաշվարկման համակարգին, ստացա մեկ օրինակ



(ստորագրություն)